# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<19>> նոյեմբերի 2024թ.     N ՄՊ/547-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N ՄՊ/32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը և «Հուշակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարողի 2024 թվականի նոյեմբերի 14-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 22-ի «Համիկ Լազարյանին «Հուշակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առեվտրային կազմակերպության տնօրենի եվ վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակելու մասին» NՄՊ/32-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում «Համիկ Լազարյան)» բառերը փոխարինել «Վաչագան Դանիելյան» բառերով:

2) որոշման 1-ին կետում «մաթեմատիկայի ուսուցչուհի» բառերը փոխարինել «վարչատնտեսական մասի համակարգող» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-19 17:41:08 GMT

eID

ՄԱՐԶՊԵՏ                    Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ